ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 109

«22» դեկտեմբերի 2020 թվական գյուղ Մայիսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասի և 7-րդ մասի <<բ>>, <<գ>>, <<դ>>, <<ե>>, <<զ>> և <<է>> կետերը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավարի 2021 թվականի բյուջետային ուղերձը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | *Կողմ՝* | *Դեմ՝* | *Ձեռնպահ՝* |
|---|---|---|---|
| Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ՝ | ---------- | ---------- | ---------- |
| Ռ. ԱՌԱՔԵԼՅԱՆ՝ | ---------- | ---------- | ---------- |
| Ա. ԶԱՔԱՐՅԱՆ՝ | ---------- | ---------- | ---------- |
| Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ | ---------- | ---------- | ---------- |

Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ՝ ---------- ---------- ----------

Գ. ՄԿՐՏՉՅԱՆ՝ ---------- ---------- ----------

Պ. ՍԱՀԱԿՅԱՆ՝ ---------- ---------- ----------

Կ. ՂԱՆԴԻԼՅԱՆ՝ ---------- ---------- ----------

Ջ. ՂԱՖԱՐՅԱՆ՝ ---------- ---------- ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱՐՇԱԿՅԱՆ

«22» դեկտեմբերի 2020 թվական
գյուղ Մայիսյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Մարմաշեն համայնքի ավագանու 2020 թվականի
Դեկտեմբերի 22-ի թիվ 109 որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ

# ՈՒ Ղ Ե Ր Զ

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 109 որոշմամբ

## ՄԱՍ I

## ՀՀ Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավարի զեկույցը 2021 թվականի Մարմաշեն համայնքի զարգացման հիմնական ուղղությունների մասին

Հիմք ընդունելով Մարմաշեն համայնքի զարգացման 2018-2022 թվականների հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված գերակայություններն ու առկա ռեսուրսները, Մարմաշեն համայնքի 2021 թվականի ծրագրի առաջնահերթությունները, 2020 թվականի ընթացքում իրականացված ծրագրերի հիմնական ուղղություններն ու դրանց կատարման արդյունավետությունը, Մարմաշեն համայնքի զարգացման հիմնական ուղղություններում առաջնահերթ և գերակա են համարվելու հնգամյա ծրագրի տրամաբանությամբ ու սկզբնական ժամանակաշրջանի համար իրագործելի այն նոր և շարունակական ծրագրերը, որոնք միտված են լինելու համայնքի տարածքային համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը և բնակչության կենսական շահերի ապահովմանը:

Մարմաշեն համայնքի 2021 թվականի համար նախանշված ծրագրերի իրականացումը խարսխվելու է համաչափ զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ և գերակա են համարվելու՝

1.Կառավարման արդյունավետության բարձրացումը, համայնքապետարանի գործունեության թափանցիկությունը և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելը:

2.Հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը:

3.Մարդու իրավունքների պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը:

4.Համայնքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների, քննարկումների և քվեարկությունների միջոցով:

5.Համայնքի կառավարման ներառականության բարելավումը:

6.Իրավահավասար ու ներդաշնակ համակեցության մշակույթի ձևավորումը:

7.Անվտանգ, առողջ և հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայրի ստեղծումը:

8.Աղբահանության կազմակերպման և կարգավորման ապահովումը

9.Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով բնակիչների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը:

10.Զբոսաշրջության ենթակառուցվածքերի զարգացման խթանումը և համայնքի զբոսաշրջային միջավայրի բարելավումը:

11.Մարմաշեն համայնքում կրթական համակարգի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

12.Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում, մշակութային ծառայություններից օգտվելու ներառականության ապահովումը:

13.Մարմաշեն համայնքի և այլ համայնքների միջև գործնական կապերի հաստատումն ու պահպանումը, ինչպես նաև տարբեր միջազգային ծրագրերին և միություններին մասնակցության ապահովումը:

14.Մարմաշեն համայնքի ներհամայնքային և ներբնակավայրային ճանապարհների ճանապարհաշինարարական լայնածավալ ծրագրերի շարունակականության ապահովումը:

15.Փողոցային լուսավորության համակարգի արդիականացումը, էներգախնայող համակարգերի ներդրումը

16.Համայնքում շենքերի և բակային տարածքների բարեկարգումն ու բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովումը:

17.Հանգստի գոտիների ստեղծումը, միջազգային չափանիշներին համապատասխան կանաչապատման աշխատանքների իրականացումը, համայնքում կանաչապատման և կանաչ տարածքների պահպանման նոր մոդելի ներդրումը:

18.Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովումը:

19.Երեխաների իրավունքների պաշտպանությունն ու անչափահասների հետ տարվող աշխատանքների բարելավումը:

20.Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների,

բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը:

## ՄԱՍ II

## Բացատրագիր-Հիմնավորում Մարմաշեն համայնքի 2021 թվականի բյուջեի նախագծի

Մարմաշեն համայնքում 2021 թվականի բյուջեի նախագիծը կազմվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքների պահանջներին համապատասխան, որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը, հավաստիությունը, հստակությունը և թափանցիկությունը:

Մարմաշեն համայնքի 2021 թվականի բյուջեն կանխատեսվում է՝

*եկամուտների գծով՝ **474683.5** հազ. դրամ,*

*ծախսերի գծով **474683.5** հազ. դրամ,*

*դեֆիցիտը **0.0** հազ. դրամ:*

**1. Եկամուտների կանխատեսում.**

Մարմաշեն համայնքի 2021 թվականի բյուջեի նախագծում (այսուհետ՝ նախագիծ) եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 474683.5 հազ. դրամի չափով՝ Մարմաշեն համայնքի 2020 թվականի բյուջեով ի սկզբանե հաստատված 407927.6 հազ. դրամի դիմաց: Ծրագրված եկամուտները գերազանցում են 2019 թվականի փաստացի հավաքագրված ընդհանուր եկամուտներին 55461.1 հազ. դրամով կամ 13.2 %-ով:

Նախագծով նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտները կազմում են 125419.4 հազ. դրամ՝ 2020 թվականի նախատեսվածից 4886.5 հազ. դրամով պակաս քանի՝ որ ապառքները ներառված չեն, իսկ 2019 թվականի սեփական եկամուտների փաստացի կատարողականից 25943.7 հազ. դրամով կամ շուրջ 19.9%-ով ավելի:

2020 թվականին սեփական մուտքերը նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում կազմել է 31.9%-ը, իսկ 2021 թվականին սեփական մուտքերը նախատեսվում է եկամուտների ընդհանուր ծավալի 26.4%-ը:

Նախագծով նախատեսված եկամուտների հիմնավորումը և համեմատական վերլուծությունը առավել հստակ կլինի դրանք առանձին եկամտատեսակների տեսքով ներկայացման պարագայում: Մասնավորապես.

1.1)Հարկեր և տուրքեր.

Հարկային եկամուտները ծրագրվել են 98040.4 հազ. դրամի չափով կամ 2020 թվականի համար հաստատված ցուցանիշից 2878.5 հազ. դրամով՝ կամ 2.9%-ով ավելի: 2021 թվականին նախատեսված հարկային եկամուտները ավել են 2019 թվականի փաստացի հավաքագրված ցուցանիշից 21593.7 հազ. դրամով կամ 28.2%-ով, որից.

- գույքահարկը նախագծով նախատեսվել է 54928.9 հազ. դրամ կամ 2020 թվականի համար հաստատված ցուցանիշից 3003.0 հազ. դրամով ավելի, իսկ 2019 թվականի փաստացի ցուցանիշից 16544.8 հազ. դրամով կամ շուրջ 43.1%–ով ավելի,
- հողի հարկը ծրագրվել է 41389.5 հազ. դրամ՝ 2020 թվականին ծրագրված ցուցանիշից 252.5 հազ. դրամով պակաս, քանի որ ապառքները չեն ներառվել: 2021 թվականին նախատեսված հողի հարկը գերազանցում է 2019 թվականին փաստացի հավաքագրված ցուցանիշը 5591.0 հազ. դրամով կամ 15.6%-ով:

Տեղական տուրքերի գծով 2021 թվականին ծրագրվել են 1722.0 հազ. դրամի մուտքեր 2020 թվականին նախատեսված 128.0 հազ. դրամի դիմաց, ինչը պակաս է 2019 թվականի փաստացի ցուցանիշից 542.0 հազ. դրամով:

1.2) Պետական դրամաշնորհներ.

Հիմք ընդունելով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները՝ նախագծով ծրագրվել են 349264.1 հազ. դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ՝ 2020 թվականի ճշտված բյուջեից 71642.4 հազ. դրամով կամ 25.8%-ով ավել:

1.3) Այլ եկամուտներ.

- Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարները ծրագրվել են 14404.5 հազ. դրամ, որը 2020 թվականի ցուցանիշից պակաս է 11744.8 հազ. դրամով՝ քանի որ ապառքները ներառված չեն. , իսկ 2019 թվականին փաստացի հավաքագրված ցուցանիշից պակաս է 2575.5 հազ. դրամով:
- Տեղական վճարների գծով ծրագրվել է 12974.5 հազ. դրամ՝ 2020 թվականի 8994.7 հազ. դրամի համեմատ, ինչն ավելի է 2019 թվականի փաստացի հավաքագրման ցուցանիշից 6926.0 հազ. դրամով կամ 114.5-%-ով: Տեղական վճարների գծով նախատեսված ցուցանիշը ներառում է աղբահանության վճարը, որը ծրագրվել է 9930.0 հազ. դրամի չափով, իսկ համայնքային ենթակայության մանկապարտեզի և արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական և

արվեստի դպրոցներ ) ծառայություններից օգտվողների համար՝ 2944.5 հազ. դրամ:,

2.Ծախսերի կանխատեսում.

2021 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել է 474683.5 հազ. դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի շուրջ 100.0 %-ը կամ 474683.5 հազ. դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), 0.0 հազ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերին (ֆոնդային բյուջե)՝ որը կճշտվի փոփոխված բյուջեի մեջ: Նախագծի ծախսային մասը ավել է 2020 թվականի բյուջեով նախատեսված ծախսային մասից պակաս է 23506.8 հազ. Դրամով՝ որը կճշտվի փոփոխված բյուջեով:

Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերի ծավալներում սոցիալական բնագավառի (կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն) ծախսերի տեսակարար կշիռը կազմում է 7.2%, տրանսպորտի բնագավառին (այդ թվում՝ ճանապարհային տրանսպորտի) վերաբերող ծախսերինը՝ 5.2%, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերինը՝ 2.9%:

Նախագծով նախատեսվել է պահուստային ֆոնդ 113516.5 հազ. դրամի չափով պետական սուբվենցիոն ներդրումային ծրագրերին մասնակցելու համար:

Ստորև ներկայացվում են Մարմաշեն համայնքի 2021 թվականի բյուջեի նախագծով ծրագրվող ծախսերի սկզբունքներն ու հիմնավորումները՝ ըստ ծրագրերի.

1.Կառավարման մարմնի պահպանում ծրագրով ծախսերը նախագծում ծրագրվել են՝ հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության (ներառյալ փոփոխությունները) պահանջները, խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև համայնքապետարանին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար դրանց գործունեության առանձնահատկությունները: Այս ծրագրով նախագծում ծախսեր են նախատեսվել 198800.0 հազ. դրամ կամ ընդհանուր ծախսերի շուրջ 41.8%–ը, ինչը 2020 թվականի ճշտված համապատասխան ցուցանիշից ավել է 28300.0 հազ. դրամով: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում էական տեսակարար կշիռ է կազմում աշխատավարձի ֆոնդը՝ 172000.0 հազ. դրամ: Աշխատավարձի ֆոնդի հաշվարկը իրականացվել է Մարմաշեն համայնքի ավագանու որոշմամբ հաստատված հաստիքացուցակի հիման վրա:

Էներգետիկ ծառայությունները ներառում են էլեկտրաէներգիայի և ջեռուցման

ծախսերը, որոնք հաշվարկվել են հիմք ընդունելով նախորդ տարիների փաստացի և 2020 թվականին սպասվող ծախսերի ծավալների միջին ցուցանիշները: Մասնավորապես, այս հոդվածով 2021 թվականին նախատեսվել է 18000.0 հազ. դրամ՝ 2020 թվականի 13000.0 հազ. դրամի դիմաց կամ 5000.0 հազ. դրամով ավել:

Կոմունալ ծառայությունները ներառում են ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև վարչական շենքերի դերատիզացիայի հետ կապված ծախսերը և ծրագրվել են 13000.0 հազ. դրամի չափով՝ 2020 թվականի 14500.0 հազ. Դրամի դիմաց::

Կապի ծառայությունները ներառում են փոստային ծառայությունները, բջջային կապի և ինտերնետային ծառայությունները, որի համար նախատեսվել է 500.0 հազ. դրամ, ինչը հավասար 2020 թվականի ցուցանիշին:

Ապահովագրական ծախսերը նախատեսվել են 800.0 հազ. դրամի չափով՝ հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի պահանջները, սահմանված գները և համայնքում հաշվառված մեքենաների քանակը և նախատեսված ավելացումները: Ծրագրված գումարը ավել է 2020 թվականին նախատեսված ցուցանիշից 300.0 հազ. դրամով:

Ներքին գործուղումների գծով ծախսերը պլանավորվել են՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 235-Ն որոշմամբ սահմանված նորմերը, նախորդ տարիների փաստացի, 2021 թվականին ծրագրված քանակական ցուցանիշները և ծրագրվել է 1 000.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված ցուցանիշին հավասար:

Համակարգչային և տեղեկատվական ծառայությունների գծով ծրագրվել է 2300.0 հազ. դրամ՝ քաղաքապետարանի գույքահարկի, հողի հարկի, տեղական տուրքերի, աղբահանության վճարների և հողի վարձակալության հաշվառման (բազայի), վճարումների ընդունման առցանց համակարգի և գանձապետական համակարգչային առկա ծրագրերի սպասարկման համար:

Ներկայացուցչական ծախսերի գծով ծրագրվել է 3 000.0 հազ. դրամ, ինչն ավել է 2020 թվականի հաստատված ցուցանիշից 1000.0 հազ. դրամով:

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունները ծրագրվել են 21000.0 հազ. դրամի չափով, ինչը ներառում է համայնքի վարչական շենքերի պահպանության ծառայությունը, գույքի վերագնահատման, ակտիվների շրջանառման, վերահսկման և կառավարման ծրագրային ապահովման համար անհրաժեշտ ծառայությունները: Մասնագիտական ծառայությունների գծով նախատեսվել է 2000.0 հազ. դրամի չափով ծախս՝ հիմնականում փաստաթղթերի արխիվացման համար, ինչպես նաև գազի և հեռախոսակապի սպասարկման և ծրագրվել է 2020 թվականի ճշտված բյուջեի չափով:

Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման գծով ծրագրվել է 7000.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշից 1000.0 հազ. դրամով ավել, որը ներառում է համայնքապետարանի ավտոմեքենաների, գույքի, համակարգչային տեխնիկայի և այլ սարքավորումների ընթացիկ նորոգումը և պահպանումը:

Գրասենյակային նյութեր և հագուստ հոդվածով ծախսերը ծրագրվել են 2000.0 հազ. դրամ, ինչը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով աշխատողների թվաքանակը և գործունեության համար անհրաժեշտ գրասենյակային նյութերը:

Տրանսպորտային նյութերը ծրագրվել են 14000.0 հազ. դրամի չափով 2020 թվականի ճշտված ցուցանիշից 2000.0 հազ. դրամով ավել և հաշվարկվել են շահագործվող ավտոմեքենաների թվաքանակով:

Կենցաղային և հանրային սննդի նյութերի գծով ծրագրվել է 4000.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված 3000.0 հազ. Դրամի դիմաց:

Հատուկ նպատակային այլ նյութերի գծով ծրագրվել է 15000.0 հազ. դրամ՝ նախորդ տարվա ճշտված ցուցանիշից 1500.0 հազ. Դրամով պակաս, որի շրջանակներում մշակութային միջոցառումների, տոնական և հիշատակի օրերի և այլ դեպքերի համար նախատեսվել է ծաղկեպսակների և ծաղկային կոմպոզիցիաների ձեռք բերում: Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին հոդվածով ծրագրվել է 37067.0 հազ. դրամ՝ 20 թվականի ցուցանիշից 334.0 հազ. դրամով պակաս:

Պարտադիր վճարների գծով՝ կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների տեխնիկական զննման ծախսերի և տուրքերի վճարման համար ծրագրվել է 2000.0 հազ. դրամ՝ 2020 թվականի ճշտված բյուջեի չափով:

Վարչական սարքավորումների գծով կծրագրվի ճծտված բյուջեի ժամանակ, 2020 թվականին ճշտված բյուջեով նախատեսվել է 3000.0 հազ. դրամ: Ծրագրված գումարի շրջանակներում նախատեսվել է համայնքապետարանի աշխատակիցներին տրամադրել անհրաժեշտ գույք և տեխնիկա, որոնք արդեն պիտանի չեն օգտագործման և ենթակա են դուրս գրման՝ ապահովելով արդյունավետ աշխատանք:

2.Նախագծային աշխատանքներ ծրագրով կնախատեսվի ճծտված բյուջեի ժամանակ , 2020 թվականի հաստատված բյուջեով նախատեսված էր 4000.0 հազ. դրամ՝ կապիտալ ծրագրերը նախագծանախահաշվային փաստաթղթերով ապահովելու համար:

3.Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, գնահատման և տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարումներ ծրագրով նախատեսվել է 2000.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված բյուջեի չափով, ինչը ներառում է համայնքի սեփականություն ճանաչվող գույքի գրանցման և գնահատման ծախսերը, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից տեղեկատվություն ստանալու վճարները:

4.Փողոցների պահպանում և շահագործում ծրագրով նախատեսվել է 25000.0 հազ. դրամ՝ 2020 թվականի բյուջեի 36,000.0 հազ. դրամի դիմաց, որն ուղղվելու է փողոցների վթարված հատվածների վերականգնման և ընթացիկ բարեկարգման աշխատանքներն իրականացնելու համար:

5.Ներդրումային ծրագրերի իրականացում ծրագրի շրջանակներում նախատեսվել է պահուստայի ֆոնդ 113516.5 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված բյուջեից 37889.9 հազ. դրամով ավել, պետական սուբվենցիոն ներդրումային ծրագրերին մասնակցելու համար:

6.Աղբահանություն և սանիտարական մաքրում ծրագրով նախատեսվել է 14 000.0 հազ. դրամ, 2020 թվականի հաստատված 16 000.0 հազ. դրամի դիմաց:

7.Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 15000.0 հազ. դրամ ներկայումս գործող լուսավորության ռեժիմի պահպանման պարագայում աշխատանքների կազմակերպման համար, որը 2020թ. Նկատմամբ ավել է 4000.0 հազ. դրամով:

8.Մշակութային միջոցառումների իրականացում ծրագրով նախատեսվել է 5000.0 հազ. դրամ՝ 2020 թվականի 4500.0 հազ. դրամի դիմաց: Ծրագիրն իր մեջ ներառում է Կանանց միջազգային օրվա /մարտի 8/, Թատրոնի միջազգային օրվա /մարտի 27/,

Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա /ապրիլի 24/, Ամանորյա և այլ մշակութային միջոցառումներ: Ծրագրի շրջանակներում Ամանորյա միջոցառումների ժամանակ մանկապարտեզների սաներին կտրամադրվեն քաղցրավենիքի նվեր-փաթեթներ:

9.<u>Նախադպրոցական ուսուցում</u> ծրագրով նախատեսվել է 18794 հազ. դրամ 2020 թվականի հաստատված բյուջեի չափով: Հաշվարկների հիմքում դրվել է 1 երեխային ամսական ուսուցման (պահպանման) ծախսերի միջին ինքնարժեքը, բյուջեից հատկացումները նախատեսվել են հաշվի առնելով 2020 թվականին երեխաների փաստացի միջին թիվը՝ որոշակի աճի հնարավորությամբ:

9.<u>Արտադպրոցական դաստիարակություն</u> ծրագրով նախատեսվել է 18273.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված բյուջեի 18607 հազ. դրամի դիմաց կամ 273.0 հազ. դրամով պակաս:

Ծրագիրը հիմնականում ներառում է համայնքի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցների սուբսիդավորումը:

10.<u>Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում</u> ծրագրով նախատեսվել է 1000.0 հազ. դրամ՝ 2020 թվականի չափով:

11. <u>Սոցիալապես անապահով ընտանիքներին և սոցիալապես անապահով անձանց աջակցություն</u> ծրագրերով նախատեսվել է 6000.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված 5000.0 հազ. դրամի դիմաց և հաշվարկված է հստակ ծրագրային մոտեցումներից, բնակչության առանձնացված խմբերի աջակցության միջոցառումներից ելնելով:

Այսպիսով, Մարմաշեն համայնքի 2021 թվականի բյուջեի նախագիծը առաջարկվում է հաստատել.

1. *եկամուտների գծով՝* ***474683.5*** *հազ. դրամ,*
2. *ծախսերի գծով՝* ***474683.5*** *հազ. դրամ,*
3. *դեֆիցիտը՝* ***0.0*** *հազ. դրամ:*